ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հուլիսի 19-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում կայացած Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի նիստի

Սույն թվականի հուլիսի 19-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի ունեցավ <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման>> միջգերատեսչական հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին՝

Ա. Մինասյան	ՀՀ բնապահպանության նախարար (հանձնաժողովի նախագահ)
Ա. Ալեքսանդրյան	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)
Ե. Տերտերյան	ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար
Ա. Մարտիրոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ
Կ. Կարապետյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության ԲՏՊ վարչության տեխնածին վթարների բաժնի պետ, փ/ծ գնդապետ
Ա. Ղազարյան	ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
Ա. Առուստամյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության հիգիենայի բաժնի գլխավոր մասնագետ
Գ. Ամատունի	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչության տեխնիկական քաղաքականության բաժնի գխավոր մասնագետ
Ի. Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Նիստին հրավիրված էր՝

<<Մինասյան Ռիսայքլինգ Քոմփանի>> ՍՊԸ-ի տնօրեն Հ. Մինասյանը

Հանձնաժողովի նիստը բացեց հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ բնապահպանության նախարար **պարոն Ա. Մինասյանը**՝ ներկայացնելով օրակարգի հարցը.

<<Մինասյան Ռիսայքլինգ Քոմփանի>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա ստանալու մասին հայտի քննարկում:

Տիկին Ալեքսանդրյանը օրակարգի հարցի հետ կապված հայտնեց, որ ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի N121-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգի>> պահանջներից ելնելով՝ հայտատուն ներկայացրել է լիցենզիա ստանալու մասին հայտը, ինչպես նաև հետևյալ փաստաթղթերը.

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության պետական փորձաքննական եզրակացության պատճենը,
2. <<Մինասյան Ռիսայքլինգ Քոմփանի>> ՍՊԸ-ի կանոնադրության պատճենը,
3. Կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը,
4. Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անձնագրի պատճենը,
5. Լիցենզավորվող գործունեության իրականացումն ապահովող մասնագետի աշխատանքային գրքույկի պատճենը:

Նշված փաստաթղթերն ուսումնասիրման են ներկայացվել լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին:

Տիկին Ալեքսանդրյանը հայտնեց նաև, որ հայտատուն իրականացնելու է բանեցված կապարային կուտակիչների հավաքում, պահեստավորում՝ հետագայում Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանելու նպատակով:

Պարոն Մինասյանը <<Մինասյան Ռիսայքլինգ Քոմփանի>> ՍՊԸ-ի ներկայացուցչին խնդրեց ներկայացնել նախատեսվող գործունեությունը:

<<Մինասյան Ռիսայքլինգ Քոմփանի>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ օգտագործված կապարային կուտակիչների հիմնական մասն ընկերությունն ընդունելու է չոր վիճակում՝ առանց էլեկտրոլիտի, իսկ մնացած 10%-ը՝ հնարավոր է էլեկտրոլիտի առկայությամբ: Այդ դեպքում էլեկտրոլիտ պարունակող պահեստի տարածքում նախատեսված է թթվային լուծույթի չեզոքացման հանգույց: Չեզոքացումն իրականացվելու է հիմնային լուծույթով՝ հասցնելով pH-ը 6.5-8.5, ինչի հսկողությունը կիրականացվի լակմուսային թղթի օգնությամբ:

Պարոն Մինասյանը հետաքրքրվեց, թե որտեղ են թափոնները տեղակայվելու և ինչ ծավալի են կուտակվելու:

Տիկին Ալեքսանդրյանը հետաքրքրվեց պահեստի օդափոխության վերաբերյալ:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ թափոնները ժամանակավոր պահեստավորվելու են Երևան քաղաքի Շիրակի փողոցում գտնվող պահեստում, որտեղ տեղադրված են օդափոխության պարագաներ: Պահեստում կարող է կուտակվել 1-ից մինչև 10 000 տոննա օգտագործված կապարային կուտակիչներ, դրանք մեծ

քանակների հասնելու դեպքում արտահանվելու են Իրանի Իսլամական Հանրապետություն:

Տիկին Առուստամյանը հետաքրքրվեց, թե ինչ փոխադրամիջոցներով են տեղափոխվելու թափոնները:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ թափոնների փոխադրումը պահեստ կիրականացվի դրանք հանձնող անձանց կողմից, իսկ արտահանումը՝ հատուկ բեռնատարներով:

Պարոն Մարտիրոսյանն ողջունեց հայտատուի կողմից նախատեսվող գործունեությունը՝ հավելելով, որ նմանատիպ գործունեության համար լիցենզիա ստացած <<Էդմետ>> ՍՊԸ-ն, որի գործունեության իրականացման վայրը գտնվում է հարևանությամբ, հրաժարվել է իր գործունեությունից՝ այն համարելով ոչ արդյունավետ:

Պարոն Մինասյանն՝ ամփոփելով հարցի քննարկումն ու հանձնաժողովի անդամների հնչեցրած կարծիքները, առաջարկեց տալ դրական փորձաքննական եզրակացություն՝ <<Մինասյան Ռիսայքլինգ Քոմփանի>> ՍՊԸ-ի կողմից վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ: Առաջարկը դրվեց քվեարկության և հանձնաժողովի անդամների կողմից ընդունվեց միաձայն:

Ա. Մինասյան

Ա. Ալեքսանդրյան

Ե. Տերտերյան

Ա. Մարտիրոսյան

Ա. Ղազարյան

Կ. Կարապետյան

Գ. Ամատունի

Ա. Առուստամյան

Ի. Հակոբյան